ՊԱՇՏՈՆ	Տեղեկատվական անվտանգության մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	13/10/2023
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև նշված աշխատանքային պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տարբեր համակարգերում օգտատերերի գրանցման գործընթացի վերահսկում և մշտադիտարկում, այդ թվում բանկի Գործառնական օր համակարգում,
- Գործառնական օր և այլ համակարգերում իրավասությունների տրամադրման գործընթացի կոորդինացում,
- SS ենթակառուցվածքի աշխատունակության և անվտանգության ապահովման գործընթացներում մասնակցություն,
- Աշխատակիցների տեղեկատվական անվտանգության գիտելիքների մակարդակի շարունակական բարելավման գործընթացին մասնակցություն,
- Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգին վերաբերվող նորմատիվ փաստաթղթերի կազմակերպում,
- Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի գործընթացների իրականացում այդ թվում մշտադիտարկման, վերստուգումների և հաշվետվությունների միջոցով:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- SS ենթակառուցվածքի ընդհանուր իմացություն: Համակարգչային ցանցի կառուցվածքի, օպերացիոն համակարգերի՝ MS Windows, Unix, Linux, հավելվածային սերվերների մասին ընդհանուր տեղեկացվածություն
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն
- Աշխատանքային փորձ SS կամ ՏԱ ոլորտում ցանկալի է
- MS Active Directory ի իմացությունը ցանկալի է
- LSBank, Armsoft կամ այլ ֆինանսաբանկային համակարգի իմացությունը ցանկալի է
- Տեղեկատվական անվտանգության, մոնիտորինգի և պահուստավորման տեխնոլոգիաների իմացությունը ցանկալի է
- Oracle, MS SQL կամ այլ DB սերվերի մասին իմացությունը ցանկալի է
- Ծրագրավորման տարրական (scripting) իմացությունը ցանկալի է
- Նորմատիվ փաստաթղթերի հետ աշխատելու ունակություն
- Հաղորդակցվելու բարձր ունակություն
- Թիմային աշխատանքի ունակություն
- Անալիտիկ ունակություն, խնդիրներին լուծում տալու հմտություն
- Խնդիրների դասակարգման և կառավարման ունակություն

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/